

17.04.2023 18:23



Հարգելի ընթերցող, փաստաբանների շրջանում շարունակվում է բլից հարցազրույցների շարքը: Այս անգամ փորձել ենք բացահայտել Հանրային պաշտպանի գրասենյակի ղեկավարի տեղակալ, փաստաբան **Թամարա Բաղդասարյանին**:

1. Մեկ նախադասությամբ բնութագրեք ինքնեդ Ձեզ

Մի քիչ դժվար է, բայց երևի պատասխանատու, պարտաճանաչ և ինքս իմ հանդեպ խստապահանջ: Մի բան անելիս պետք է անեմ շատ լավ:

2. Ի՞նչ կփոխեիք Ձեր կյանքում

Կջնջեի պատերազմը

3. Կյանքը հրաշալի է, երբ ...

Հարազատներդ առողջ են ու դու լուրջ մտահոգվելու պատճառ չունես

4. Ո՞րն է եղել Ձեր կյանքի ամենասխալ որոշումը

Դժվարանում եմ պատասխանել : (խորհեց երկար)

5. Քչերը գիտեն, որ Դու...

Այնքան էլ խիստ չեմ

6. Սովորություն, որից փորձում եք ձերբազատվել

Ամեն գնով ամեն ինչ հասցնելը

7. Հիմնականում ինչպե՞ս և քանի՞ օրում եք ծախսում Ձեր աշխատավարձը

Շատ արագ, առավելագույնը 5-10 օրում

**8. Թամարա Բաղդասարյանը տարբերվում է տանը
և աշխատանքում**

Այո, տանը ես մայր եմ, տնային տնտեսուհի,
աշխատավայրում՝ փաստաբան

**9. Արդյո՞ք այսօրվա Թամարա Բաղդասարյանը լավ
օրինակ կարող էր լինել 18 տարեկան Թամարա
Բաղդասարյանի համար**

Կարծում եմ՝ այո:

Ըստ իս, իմ նախագծած նպատակներին գրեթե
հասել եմ

10. Ինչպե՞ս եք վարվում զայրույթի պահին

Անկեղծ ասած, հիմա փորձում եմ զայրույթս զսպել և
պատճառներին մի փոքր ուշ անդրադառնալ, բայց
դա փորձում եմ, իսկ հիմնականում զայրույթի պահին
կարող եմ անցնել բարձր տոների և փորձել
ապացուցել իմ ճիշտ լինելը

11. Սու՞րճ, թե՞ թեյ

Դառը սև սուրճ

12. Նախընտրում եք ակտիվ, թե՞ պասիվ հանգիստ

Ակտիվ հանգիստ ծովում: Ինձ համար հանգիստը
ասոցացվում է ջրի հետ

**13. Եթե Ձեր մասին ֆիլմ նկարահանվեր, ինչպե՞ս
կկոչվեր այն**

Վերնագիրը կլիներ այսպես. «Կինն ամեն ինչ կարող
է միաժամանակ հասցնել»

**14. Ինչպե՞ս եք թոթափում հոգնածությունը երկար
տևած դատական նիստից հետո**

Եթե նիստի արդյունքն ինձ գոհացնում է չեմ
հոգնում, հակառակ դեպքում ուղղակի մեկ բաժակ
սուրճ է պետք

15. Ի՞նչն է փաստաբանին վստահելի դարձնում

Աշխատանքն ու ջանքերը, որը տեսնում է վստահորդը

**16. Ընտրեցիք իրավաբանի մասնագիտությունը
հենց փաստաբան լինելու համար, թե՞...**

Չէ, իսկզբանե դատախազ դառնալու միտումով
ընտրեցի, իսկ փաստաբան դառնալ ստիպեց
ընկերուհիներիցս մեկը

17. Ինչպիսի՞ն պիտի լինի և չլինի փաստաբանը

Փաստաբանը չպետք է վերածվի վստահորդի
կամակատարի և պետք է լինի իր գործին
տիրապետող իրավաբան

18. Փաստաբանի լավագույն գովազդը...

Վստահորդների գոհունակությունն ու հոգուտ նրանց
կայացված ակտերը

**19. Ո՞րն է եղել Ձեր կողմից իրականացված
ամենադժվար պաշտպանությունը, ի՞նչ
հանցանքում էր կասկածվում Ձեր վստահորդը**

Հոգեբանորեն ծանր դեպքեր շատ են եղել և լինում,
բայց մի սպանության դեպք կար, ես սպանության մեջ
կասկածվողի պաշտպանն էի և այնքան ազդված էի
իրավիճակից, որ մինչ օրս զգացողություններս հիշում
եմ:

**20. Մեր բլից հարցերին պատասխանելու համար
ու՞մ եք նետում մարտահրավերը**

Փաստաբան Ռուզաննա Սիրեկանյանին



```
Վերադառնալ $(window).load(function(){ if(typeof $(".fb_comments_count").html() != "undefined" &&
parseInt($(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })
```